# Նա գրեց մանկական անմեղ երազանքների, գեղեցիկ բնության ու հոգու տառապանքի մասին

## ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԸ



Օնիկ Գրիգորի Շուշանյանը, գրական անվամբ՝ Վազգեն Շուշանյան գրողների այն սերնդի ներկայացուցիչներից էր, որ ապրել է հայ ժողովրդի պատմության ճակատագրական մղձավանջային ժամանակաշրջանում, տեսել է կոտորած ու աքսոր, հարազատների ու կանգվածների մահը, որբացել է և տարել կյանքի ծանր հարվածները: Այդ սերունդը, որ ստացավ "անապատի սերունդ" անունը, չափազանց շատ բան էր տեսել ու չափազանց շատ էր լցված տառապանքով: Հենց այդ սերնդի մասին է ասում Շուշանյանը. "Գերության մեջ ծնած ենք, հուսալքության մեջ հասակ նետելու համար: Մեր ուժերեն վեր ցավեր կրած ենք ու արագությամբ ծերացած":

Վազգեն Շուշանյանը եղել է սփյուռքահայ գրականության հիմնադիրներից մեկը, բանաստեղծ ու արձակագիր, կրքոտ հրապարակախոս և խմբագիր: Նրա ստեղծագործությունները կարդալիս կարելի է կենսագրական բազմաթիվ փաստերի հանդիպել, իսկ մի քանի գործեր գրված են հեղինակի հետ կատարված դեպքերի հիման վրա: Սփյուռքահայ գրականության մեջ թերևս չկա մի գրող, որի ստեղծագործությունն այդքան ինքնակենսագրական լինի, ինչպես Շուշանյանինն է: Նրա բոլոր երկերում կարելի է անպայման նրա կյանքից մի որևէ փաստ գտնել, իսկ որոշ գործեր պարզապես ամբողջովին կառուցված են ինքնակենսագրական նյութերի վրա:

Վազգեն Շուշանյանը ծնվել է Մարմարայի եվրոպական ափին փռված Ռոդոսթո գյուղաքաղաքում, 1903 թվականի փետրվարի 9-ին: Հայրը՝ Գրիգոր Շուշանյանը, իրավագետ էր, բայց զբաղվում էր պապենական հողերի կառավարմամբ: Նա քաղաքի հարգված անձնավորություններից էր: "Ամրան գիշերներ" վեպում Շուշանյանը տալիս է իր հոր դիմապատկերը, ազնիվ ու շիտակ սկզբունքների տեր, չափազանց խստաբարո, նուրբ ճաշակով և ազնվականական շարժուձևերով մի մարդ: Ավելի մեծ սիրով է հիշում Վազգենը իր մորը՝ Նարիկ Դանիելյանին. "Դանիելյանը ավելի տիպական է մեջս, քան թե Շուշանյանը":

Մինչև 1911 թվականը Վազգեն Շուշանյանը սովորում է Ռոդոսթոյի Սուրբ Խաչի Հիսուսյան և Սուրբ Թագավոր թաղի Հովհաննիսյան նախակրթարաններում, իսկ 1912-1915 թվականներին սովորում և ավարտում է Ս. Մանուկյանի ղեկավարած նախակրթարանը: Այսպես էլ վերջացան հայրենի բնության և տան մեջ, հարազատների գուրգուրոտ հոգատարության տակ Վազգենի անցկացրած կյանքի լավագույն տարիները: Ընդամենը տասներկու տարի: 1915 -ին պատանին բռնում է Գողգոթայի ճանապարհը:

Սեպտեմբերին Շուշանյանների ընտանիքը տարագրվեց հայրենի երկրից դեպի Մերձավոր Արևելքի անապատները. տարագրվողների մեջ էին բոլորը՝ հայրը, մայրը, փոքր քույրը՝ Մարին, փոքր եղբայրը՝ Գևորգը: Աքսորի երկար ու ձիգ դժոխային ճանապարհին Շուշանյանը զրկվում է բոլոր հարազատներից: Հետագայում նա պիտի հիշեր այս դաժան օրերը, պիտի հիշեր իրեն որպես "տղա մը, որ 12 տարեկանին՝ թշնամի, օտար ու դավաճան քաղաքի մը մեջ, արևածագի մը արթնացած է մինակ, առանց հոր, մոր, քրոջ ու եղբոր՝ պստիկ ու փխրուն ձմռան ցուրտ հողին վրա ինկած տարագիր թռչնիկի մը պես: Սրտեն զարնված՝ անմեղ վարուժնակ, ցեխին մեջ ինկած վիրավոր ծաղիկ...":

Որբացած ու դառնացած պատանին արաբական քաղաքներում ու գյուղերում, ապա Կիլիկիայի տարբեր վայրերում կատարում է ամեն տեսակի ծանր աշխատանք: Սարսափելի ծանր մանկություն, որ Շուշանյանն հետագայում անվանեց "պատրանաթափ", ցավով հիշելով այդ տարիները:

Պատերազմի ավարտից հետո Շուշանյանն աքսորից վերադառնում է Ռոդոսթո: Սակայն արհավիրքից հետո անհնար էր մնալ հայրենի քաղաքում, հարազատների բացակայությունը ճնշում էր նրան, այստեղ մնալն այլևս անհնար էր, վերադարձը ծանր ու հուսահատեցնող: Սակայն անհրաժեշտ էր վերադարձ դեպի կյանք: Եվ մի քանի ամիս հետո միայնակ պատանին գնում է Պոլիս, դառնում Արմաշի երկրագործական վարժարանի աշակերտ: Վարժարանը 1920 թվականին տեղափոխվում է Արևելյան Հայաստան: Շուշանյանը լինում է Երևանում, Բայազետում, Ղարաքիլիսայում, Թիֆլիսում ու Բաթումում: Տասը ամիս մնալուց հետո վարժարանը կրկին վերադառնում է Պոլիս: Դարձյալ շարունակվում են թափառումները, հասնում է Նյու Յորք, վերադառնում Իզմիր ու Պոլիս, 1922 թվականին վերջնականապես հաստատվում է Ֆրանսիայում: Շուշանյանի համար սկսվում է նոր կյանք: Վեց տարի շարունակ տարած քաղցին ու զրկանքներին փոխարինում է մի նոր իրականություն: Նա աշխատում է Ռենոյի ավտոգործարանում, Մոնրուժի մետաղագործարանում: Շարունակում է ուսումը՝ մասնագիտանալով երկրագործության և կաթնարդյունաբերության մեջ: Հետագայում նաև եղել է Սորբոնի համալսարանի ազատ ունկնդիր: Ֆրանսիայում նույնպես նրան ծանր կյանք է բաժին ընկնում: Հատկապես 1923-1933 թվականներին, երբ տքնությամբ և օրվա ապրուստ է վաստակել, և միաժամանակ սովորել, բնութագրելով այդ շրջանի իր կյանքը որպես "մնայուն զրկանքներու շղթա մը":

Վազգեն Շուշանյանի ծանր ու տառապանքներով լի կյանքն ավարտվում է 1941 թվականի հունիսի 2-ին, Փարիզի հիվանդանոցներից մեկում, ամենքից մոռացված ու լքված: Ասում են, որ նա թաղվել է հասարակաց փոսում և անհայտ է նրա գերեզմանը:

Մանկական շքեղ երազների, բնության գեղեցկության ու հոգու տառապանքի մասին անօրինակ ստեղծագործությունների տաղանդավոր հեղինակ Վազգեն Շուշանյանն ապրեց ընդամենը 38 տարի, որից 25-ը եղան նրա անձնական տառապանքի ու տքնության, հուզումների ու տվայտանքների տանջալից տարիներ:

Շատ է գրել Շուշանյանը. հեղինակ է երկու տասնյակի հասնող գեղարվեստական երկերի: Նա բնորոշ ներկայացուցիչն էր այն գրական սերնդի, որն իր ստեղծագործական առաջին քայլերը պիտի աներ խեղաթյուրված հոգով, հուսահատված ու լքված կյանքից, չունենալով ոչ մի հույս: Նա իր գրական ստեղծագործությունն սկսել է մինչև Փարիզ գնալը, սկսել, որպես բանաստեղծ: Քսանական թվականների սկզբներին հայ մամուլում երևացին նրա առաջին բանաստեղծությունները: Անորոշ թախծի, հուսալքման, երբեմն էլ լացի տրամադրություններ կան այդ պատանեկան գործերում: Շուտով նա անցավ արձակին, ստեղծելով բազմաթիվ վեպեր ու վիպակներ, հուշագրություններ ու հրապարակախոսական բնույթի էջեր:

Շուշանյան-գրողը շատ բան ուներ պատմելու ընթերցողին, ու նա գրեց ծննդավայրի գեղեցիկ բնության, մանկության շքեղ երազների, հարազատների ողբերգական կործանման մասին՝ բազում էջերում կենդանացնելով մի "երկիր հիշատակաց": Գրեց "անապատի" սերնդի պատմությունը՝ քայլեցնելով նրան աքսորի տանջալի ճանապարհով: Ցրեց նրան սփյուռքի լայն տարածքի վրա մենակ ու անօգնական, կյանքի կռվում դիմադրելու, ապրելու և գոյատևելու համառ մի կամք ներարկելով: Շուշանյանը առաջին հերթին կերտել է իր կերպարը: Այդ հաստատել է նաև ասելով. "Կյանքս ինքը վեպ մըն է":

Շատ է գրել Շուշանյանը: Հիշատակելի են՝ "Գարնանային", "Օրերը գեղեցիկ չեն", "Մթին պատանություն", "Ճերմակ Վարսենիկ" վեպերը, "Մահվան առագաստ" վիպակը, "Ամրան գիշերներ" պատմվածքների ու վիպակների ժողովածուն: "Ամրան գիշերներ" վեպով Շուշանյանը նոր կերպար ստեղծեց հայ գրականության մեջ: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև "Երկիր հիշատակաց" պոեմը: Սա ինքնակենսագրական բնույթի էպիկական մի ստեղծագործություն է, իր խնդիրներով շատ մոտիկ հեղինակի այդ շրջանի մյուս ստեղծագործություններին, հատկապես "Ամրան գիշերներին":

Վազգեն Շուշանյանի ամբողջ ստեղծագործությունը դառնացած հոգու մի ճիչ էր, հուսահատության, ընդվզումի ու բողոքի կանչ: Նրա հերոսների մեջ ուժեղ է ապրելու տենչը, պատրաստակամություն կա կռվելու, պայքարելու հանուն կյանքի, բայց նրանց անծանոթ են պայքարի ուղիները, նրա հերոսները չեն տեսնում պայքարողների մեծ բանակը, նրանք չեն կարող միանալ այդ բանակին:

Վազգեն Շուշանյանը մեծ հայրենասեր էր, անսահման նվիրված իր հայրենիքին, ժողովրդին, նրա մշակույթին: Հայտնի է, որ որբացած ու դառնացած պատանին առաջին աշխարհամարտից հետո սովորել է դաշնակցության հովանավորության տակ գտնվող ուսումնարանում: Սովորելու տարիներին իր և մյուս որբերի կրած տառապանքների, ինչպես նաև դաշնակցությունից ստացած քաղաքական դասերի պատկերը հետագայում Շուշանյանը տվեց իր "Սիրո և արկածի տղաքը" (1925) վեպում:

Վազգեն Շուշանյանը սփյուռքի այն ճշմարիտ հայրենասերներից էր, որոնք հասկացան պատմության ճշմարտությունը և ամբողջ հոգով կապվեցին մայր հայրենիքին, դառնալով նրա պաշտպանը: Ավելին: Շուշանյանը բազում դիմումներ գրեց ներգաղթելու համար և անկեղծ հավատով ներշնչեց բոլորին միասնության ու հայրենադարձության գաղափարը: Հայաստան ներգաղթելու ցանկությունը, գաղափարական համոզմունք լինելուց բացի, նաև սրտի մղում էր, որ գնալով վերածվում էր իղձի, կարոտի: Նա երազում էր այն պահը, երբ Երևանի փողոցներում կտեսնի մանուկների, որ "կը մեծնան մեր լեզվի քաղցր բառերը իրենց շրթներուն վրա, մեր լեռներուն շուքին տակ":

Տարիներն անցնում են, աշխարհի քաղաքական երկնքում կուտակվում են մռայլ ամպեր, պայթում է համաշխարհային երկրորդ պատերազմը, և գրողի ներգաղթելու երազանքը մնում է անկատար:

Շուշանյանը սիրո ու տառապանքի երգիչ է: Նրա ստեղծագործության հիմնական թեման սփյուռքն է, հայ մնալու, գոյատևելու պայքարը, սերն ու ձգտումը դեպի վերածնված հայրենիքը: Վաղամեռիկ գրողի ստեղծագործությունները աչքի են ընկնում ապրումների ռոմանտիզմով, գունեղ ու հարազատ լեզվով: